Արձանագրություն N 2

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կողմից **ֆայլային սերվերների և անխափան սնուցման սարքերի** գնման նպատակով կազմակերպված թիվ **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **«24» «հուլիսի» 2025թ.**

2025 թվականի հուլիսի 24-ին ժամը 10:00-ին տեղի ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) **ֆայլային սերվերների և անխափան սնուցման սարքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը, որին ներկա էին Հանձնաժողովի 4 անդամները՝

Հանձնաժողովի նախագահ՝
Արտյոմ Բաբայան
անդամներ՝
Կարեն Միքայելյան, Հայկ Շահնազարյան, Նշան Հակոբյան

Նիստը նախագահում էր **Արտյոմ Բաբայանը**:
Քարտուղարությամբ՝ **Սիլվա Գրիգորյանի:**
Նախագահողը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի Հանձնաժողովի նիստն իրավազոր է, ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց հաստատել այն.

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝
Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1.**ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10** ծածկագրով ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
Կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10 ծածկագրով ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 14-րդ կետի.
Որոշվեց՝
1.1 Հաստատել **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10** ծածկագրով ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝

Արտյոմ Բաբայան _____
անդամներ՝

Կարեն Միքայելյան _____

Հայկ Շահնազարյան _____

Նշան Հակոբյան _____

քարտուղար՝

Սիլվա Գրիգորյան _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար **ֆայլային սերվերների և անխափան սնուցման սարքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Հարգելի պատվիրատու, խնդրում եմ պարզաբանել, թե 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ինչ նկատի ունեք «Սմարտ» պահանջի տակ:

Պարզաբանում N 1

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում եմ, որ.

Տեխնիկական բնութագրում օգտագործված **«Սմարտ Անխափան սնուցման սարք»** ձևակերպման մեջ «Սմարտ» բառը բնութագրում է սարքի **խելացի կառավարման և մոնիտորինգի հնարավորությունները**:

Մասնավորապես, սարքը համալրված է համակարգչային **ինտերֆեյսային պորտով** (օրինակ՝ USB, Serial կամ SmartSlot), ինչը թույլ է տալիս՝

- իրականացնել **մշտադիտարկում (մոնիտորինգ)**՝ էլեկտրամատակարարման, մարտկոցի լիցքավորման, բեռնվածության և այլ պարամետրերի վերաբերյալ,
- ապահովել համակարգչային **ինքնաշխատ անջատում (Auto Shutdown)** լարման երկարաժամկետ բացակայության դեպքում,
- ինտեգրվել ցանցային կամ տեղեկատվական համակարգերին՝ կառավարման համապատասխան ծրագրային ապահովման միջոցով,
- ինչպես նաև աջակցել լրացուցիչ քարտերի կամ մոդուլների տեղադրմանը՝ ընդլայնված կառավարման և հաղորդակցման նպատակներով (SmartSlot):

Այս հատկությունները դարձնում են սարքը **խելացի (սմարտ)**՝ ի տարբերություն սովորական անխափան սնուցման սարքերի, որոնք չունեն նման կառավարման կամ մոնիտորինգի գործառույթներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՊԾԷԱ-ԱՊՁԲ-2025/10** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Սիլվա Գրիգորյանին:

Հեռախոս՝ +374 60 501 560 +136:
Էլեկտրանային փոստ՝ s.grigoryan@atdf.am: